



75 (259). ՄԵԿԻՑ ՀԱՐՈՒՍ

Ո՛ն դինա, ի՛նչ սատանութենով, աղքատ մե՛ մեկից կը հարստնա:

Հըտ ըղոր հաց ժողվող չընկերն դիմնա օր՝ ֆլան մարդն աղա է դառձի, կէրթա մոտ:

— Բարև՛, — կըսե:

Հարուստն կը հարցու:

— Դու ո՞ն իս, դքըղի չըմ ճանչնա:

— Տո՛, յա՛, դիսի չըս ճա՞նչնա. ես ու դու հըտ չիրար ուրախցի, հրա չիրար լացեր ինք, մեկտեղ՝ չիրար ծոցն ինք պարկի, հմալ շուտ մոոցա՛ր:

Հարուստն չերես կը շրջե, կը հեռենա:

Մեծորեք ըսեր ին. «Աղքատն օր մեկից կը հարստնա՛ է՛ն ձիավորն է, եր ձին հեծնա՛ զաստված կը մոռնա, եք չիջնա՛ զձին ու զաստված կը մոռնա»:

